

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱԹՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Տր.
Վեցամսեայ 4 Տր.

ԱՐՏԱՍՈՂՄԱՆ

Տարեկան 10 Տր.
Վեցամսեայ 5 Տր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՂ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ՀԱՍՏԷ

Rédaction du Journal

«Travounk»

Varna

Редакция на

Вѣстникъ

«Нравуникъ»

Варна

Իրոպիանք եւս չեն տրուիր

ՏԽՐՈՒՆԻ

Նւագրի Կիւմիւսեան սգակիր ընտանիք կուգայ իր շնորհակալութիւնը յայտնել այն ամէն հայ եւ օտարազգի բարեկամներու ու զբաղիներու որոնք իրողացեալ զաւակին՝

ՕՐ. ԱԶԱԽՆԻ ԿԻՒՄԻՍԻՇՃԵԱՆԻ

Երկարատեւ հիւանդութեան միջոցին եւ մահուանոց դառնադէս մահուանը առթիւ, չը զրացան իրենց զուգուրանքը եւ մխիթարիչ աջակցութիւնը նուիրել. եւ նոյնպէս բիւր շնորհակալիք Յոյս խումբի երկսեռ անդամներուն, Պուլկար Կիւմիւսեանի եւ այն բոլոր ընկերներուն ու բարեկամներուն որոնք փութացին իրենց վերջին յարգանքը մատուցանել ծաղկաթի հանգուցելոյն, իրենց մասնակցութեամբ բոսկարելոյն շնորհակալութիւնը յայտնելու համար:

ԽՈՒԺԱՆԱՊԵՏՆԵՐԸ

Մինչ թիւրքերոյ գաւառներէն ամէն օր տրձակներով խնդրագրեր, հանրագրեր, տխուր տեղեկագրեր ու ստիպողական հեռագրեր կը հասնին Պատրիարքարան, Ազգ. իշխանութենէն եւ երեսփոխաններէն նպաստ եւ պաշտպանութիւն խնդրելով սովորաբար ու հարստահարեալ հայ ժողովուրդին, ասորին այդ ազգային իշխանութիւնը, հայ երեսփոխանները գայթակղալի եւ ամօթաբեր կուռազանութիւններով ժամանակ կը վատնեն վասն ոչինչի, Գաւառի հայուն համար հոգի տալ ձեւացնող խօսքի ու թուղթի հերոսներն են որ այս անգամ կըրկին գաւառացիին ծովացեալ թշուուրեան մէջ թողած, արգելք կ'ըլլան ազգային իշխանութեան որ խելքը գլուխը ժողոված գարմաններ խորհի ու զործադրէ գէթ փոքր ինչ ամօքելու համար գաւառի ժողովուրդին վիճակի դառնութիւնը:

Խօսքի ու թուղթի հերոսներուն իրենց թերթերը ու սրահները նեղ կուգան ամբոխին միամտութիւնը շահագործելու համար, եւ այս անգամ ամէն գէղով

ճիգ կը թափեն եկեղեցիներն ալ իրենց խանութը դարձնել իրենց շմարտուած եւ անբարոյացուցիչ քարոզչութիւն, քինախնդիր լուսազանցութիւններուն եւ ազգը վերտանգող ռեքլամներուն կրկէսը ընել:

Ազգ. երեսփ. ժողովոյ անցեալ ուրբաթ օրուան նիստը պարզեց թէ հայ ազգին ընտրեալները ստուար մեծամասնութեամբ կը մերժեն եկեղեցիները տրամադրելի ընել Գաւառացիական եւ Հնչակեան միջազգայնականներուն. բայց Գաւառացիական պետերը կուսան ըլլալով ազգային երեսփոխաններուն բացասական տրամադրութիւնը, ստահակներու խումբ մը հետ բերած էին, բռնութեամբ իրենց կամքը առաջ քշել տալու համար, Գաւառի, կարծիքի եւ խօսքի ազատութեան այդ կեղծ պաշտպանները հոն տեսնելով թէ ազգին ընտրեալներուն ստուար մեծամասնութիւնը կը մերժէ իրենց բաղձանքին գոհացում տալ, բռնութեան դիմեցին՝ միջամտութեան հրաւիրելով իրենց հետ բերած ստահակներու խումբը, Շահրիկեան որ նախադրեալ եղած էր երեսփոխանի մը վրայ, բայց ուրիշ երեսփոխանէ մը արգելուած, լրբութիւնը ունեցաւ հասէք ժողովուրդը՝ պոռալով, կանխապատրաստած ստահակները յարձակումի հրաւիրելու:

Նոյն դատապարտելի վարմունքը ունեցաւ Վարդգէս, Ս. 25 րադի յոյժ տրամաբանական ատենախօսութեան ջանքախիշ ազդեցութիւնը բեկանելու նպատակաւ «ժողովուրդը ասկէ ձեզդուրս վաճառելու իրաւունք ունի» զոչելով, որ պարզապէս անցեալ տարուան մարտ 31ի թուրք ռեաքսիօներներուն Օսմ. խորհրդարանը ճնշումի տակ առնելու փորձն էր որ կը կրկնուէր, եթէ հոս հայ երեսփոխանները ժողովարանը ձգելով չի հեռանային:

Սահմանադրական ժողովի մը մեծամասնութեան կարծիքին ու ձայնին դէմ ազդելու, զայն մարելու, խափանելու համար խու-

ժանին միջամտութիւնը հրաւիրել ռեաքսիօներին, յետագիւտականի զործ է, եւ թէ սահմանադրական եւ օրինասէր մարդու Այս դէպքը նոր խարան մըն է Գաւառացիական չէֆերուն, այդ խուժանապետներու ճակտին:

Անոնք իրենց այդ ընթացքով ապացուցին թէ, երբ կարգը իրենց խօսքը առաջ քշելուն գայ, չեն ճանչար ոչ կարծիքի ազատութիւն, ոչ մեծամասնութեան ձայնին յարգանք եւ ոչ ալ օրէնք. նոյն իսկ չեն խղճահարիր պատճառ ըլլալու որ պետական հարուած մը գայ ու ջնջէ Ազգ. Սահմանադրութիւնը:

Այս առթիւ վերջնականապէս եւ յստակօրէն պարզուած ըլլալով գաւառացիական կոչուած խուժանապետներուն մտաւորական, Ս. Պատրիարքին եւ երեսփոխաններուն կը մնայ յառաջիկայ նիստը գոհափակ ընել իւր զգուշական միջոցներով ապահովել երեսփոխաններու կարծիքի, խօսքի եւ քուէի ազատութիւնը:

Յ. Պարպեք

ԱԶԳԱՅԻՆ

Եզգ երեսփ. ժողովոյ վերջին նիստը անպատուաբեր կռիւներով խափանուած է եւ վիճաբանութեան նիւթ եղող խնդիրը որ եկեղեցիները միջկրկներու եւ ատենախօսութեան տրամադրելի ընելու կամ չընելու խնդիրն էր, առկա մնացած է: Անկեղծ ժողովուրդը ժողովին միջամտելու հրաւիրող Շահրիկեան եւ Վարդգէս երեսփոխաններ պատճառ եղած են որ ատենապետը յառաջիկայ նիստը դռնփակ ընելու որոշում տայ:

Ս. Պատրիարքը անցեալ շաբթուան թուր ժողովներէն բացակայ գտնուած է իր սկարութեան պատճառաւ: Պատրիարքին այս երկարող տկարութիւնը հետեւեալն է վարչական Հազգը փաշայէն իր քրինք խաբուած տեսնելուն եւ Օսմ. հայ, երեսփոխաններէն լքուելուն: Նորին Աւրբազնութիւնը վտակիր ու սրտ-բեկ վիճակի մը մատուցած ըլլալով, ստաղծած է իր վերջնական հրամարկներ տալ ու քաշել ընտրութիւն:

—Կիւմիւսի Ս. Կաթողիկոսը Ատանա

ից-ն սխորդոթեան կոչած է էնիւր թիւ առաջնորդ Տ. Բարգէն Վրդ. Կիւմիւսեան, Բայց ասոր իր պաշտօնին զոր խը մնալը անհրաժեշտ դատուելով, Ատանա ժողովը օւրիշ երեք վարդապետներ ընտրելի ցոյց տուած է Ատանայի համար:

Նոյն ժողովը որոշած է քննիչ պաշտօնով Տրոպիզոնի գրկել Տէր Դրիգորիս Վրդ. Պալապաշտը: Այս եկեղեցականը որ Պալապաշտի եւ Թոմասիոյն օգնութիւն կարգուած էր, Կիւմիւսի թէ տակաւին շատ պիտի ուշանայ այս կողմերը գալու:

—Վանայ վիճակին Լուս. Տեղապահ կարուսեցու Տէր Եղիշէ եպսկ Ձիւրիս կիրեան, որ էլ Ժրամնէն ուղղակի Վան պիտի երթայ:

—Եզրպտոսի Զեկազկ քաղաքը բնակող Եզրպտոսի ալեգար հոգատէր Տ. Գրիգոր Մեծօտէթեան, որ անցեալ օր 3000 անգլ. ոսկի արժողութեամբ հող կտակեց Հ. Բ. Բոգ. Միւթեան իր ծննդավայրին մէջ վարժարան մը կառուցանելու համար, մնացած է այդ կտակէն երեք օր վերջ, Եզրպտոսի Զեկազկ քաղաքը մը կտտարուած է Հայ Յոյն եւ Դիփի կղերականներու մասնակցութեամբ եւ ընդ նախագահութեամբ Եզրպտոսի Ստեփանոս Աղաւնիւնի վարդապետին:

—Եզրպտոսի մէջ օովատանջ կիւեր եւ մանուկներ կտտաւարութեան պաշտօնատունը դիմելով հաց պահանջած են, եւ հոնկէ ձեռնուեալն ետ դառնալով, սկսած են փռուելու եւ հայաց խանութները թալելու: Կառավարչը եւ շոյոց Առաջնորդը հսկանակութեան ձեռնարկած են:

—Թիֆլիսի բարձր դատարանը դռնփակ քննեց 1908 սեպտեմբերին ձերբակալուած ուսուցիչ Լուկաս Մալինցեանի դատը, որ ամբաստանուած էր իւր Հնչակեան մասն. ճիւղի անդամ փաստաբանին եւ ամբաստանաւորին հերքումէն: Անիւր անօգուտ անցան. դատարանը զանի դատապարտեց ընդ միջոց ազատութիւն եւ ամէն իրաւունք զրկու մի:

—Ալք երեսփ. եւ Գաղ. ժողովոց ատենապետները հրաժարականին տուած են, ուրբաթ օրուան միջազգէն զգուանք զգացած ըլլալով:

—Ատանայէն հեռագրաւ եւ Պատրիարքարան թէ Զոկ Մարգարեան եկած տեղեկութեանց համաձայն, 200) հոգի անօթութեան մեռնելու վտանգին տակ իր գտնուելն եւ նպատակ եւ հազուադէպ թով ստաղծուել կը խնդրեն:

—Մո չեն կը գրեն թէ շորս հայեր երբ Շատախու Կոթ դիւղը կերթային ճամբան ձիւներուն տակ մայրով մեծուած են: (Տես 4րդ էջը)

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ

(Շար. Աստուրյ Բյուք)

Այս քան ճշգրտորէն գնահատած ըլլալով դրամին ահաւոր դերը իրենց ձեռքին մէջ, մեր միջադ- գային ընդարականները, մա- սամբ անիշխանական, խտիր չեն գներ անոր տիրանալու մի- ջոցներուն մէջ որոնց է մին է ահաբեկութիւնը (տէռորիզմ)։ Դը- րամին սիրոյն, և ընկերական ար- դար բողոքներու հանդէպ, չեն կտիր նոյն իսկ ոճիրին առջև, քանի որ ուրիշներու կեանքը, և խղճի ազատութիւնը իրենց աչ- քին դադարած են նուիրականու- թիւն մը։ անոնք անարարելի իրա- ւունք մը ըլլալէն, Անոնք իրենց աշխարհաբաղաբայի, միջադգայ- նականի հանգամանքով, մի և նոյն տիպարի մարդերն են տիեզերքի ամեն կէտերուն վրայ։ Մտածու- մի և նոյն դատարանութիւնը կեանքի մի և նոյն սեթեթով, սկզբուն- քի մի և նոյն քաղցրանուշ վայ- րագութիւնը իրենց ներքինը, ի- րենց հոգեբանութիւնը կը յատ- կանիչէ իսկ արտաքինին մէջ մա- ղերու նոյն խոսքով, փողկապի մի և նոյն ազուցումը, հրամա- յելու մի և նոյն գաճաճ-տիտա- նութիւնը, չեչափ նոյն և մի սը- նամէջ՝ ուռուցիկ տիրականու- թիւնը, քալումքի մէջ մի և նոյն յոխորտանիքի մէջովը։

Անոնք մի և նոյն կաղա- պարով ձուլուած են, չհամոզուած ու չբռնած ընկերական վարդա- պետութիւններու առինքնուած կապկութեամբ։ Աղանդաւորներ են աւոնք, և արդէն գիտենք, թէ նմանատիպ աղանդաւորու- թիւններու հակամէտ հոգիները անհասարակչիւ անհատականու- թիւններ են, որոնք չեն կրցած բռնականոն կեանքի մը գործա- ւորները դառնալ մարդկային ըն- կերութեան ծոցին մէջ։ Տարբե- րութիւնը, սակայն, որ կայ քը- րիստոնէութեան հին աղանդա- ւորներուն, և ընկերավարութեան արդի աղանդաւորներուն միջև, անհուն է և անբաղդատելի։ Հի- ները՝ իրենց ճգնումի հակամի- տութիւնով մեծ քաղաքներէ կը խորշին, առանձ ութեան ունկիւն- ներ կը փնտռեն իրենց հիւանդ- մարմինը զետեղելու համար։ Մեր նոր աղանդաւորները իրենց ան- ջուք օճախն ու գիւղերը կը թո- չուն, մեծ ոստաններու կեանքին մէջ ծփալու համար։ Հիները ի- րենց սակաւապետութեամբ, և նորերը իրենց փարթամութեամբ զիրար կը գերազանցեն։ Անոնք իրենց բարեպաշտ հասարակապե- տութեան նեղ սահմանին մէջ ի- րարու կը նպաստեն, իսկ ասոնք՝ նորերը, անպաստաւորութիւն զատ

ուրիշ մտածում չունին։ Հին ա- ղանդաւորները գոնէ իրենց քը- րիստոնէական ներշնչութիւն վա- րուած, զանազան ճգնողական մա- հացումներով ինքզինքնին կըս- պաննէին, իսկ արդիականները՝ ահմասիրութեան, ու եսապաշ- տութեան անձնատուր, մեղի, կնա- մարդի, իրենց անձին հանդէպ, և զուրկ կորովի առնականութենէ, կը զիջանին ուրիշները ՍՊԱՆՆԵ- ԼՈՒ վատութեան, Երբեմնի ճշգ- նաւորներու բարոյականը տառա- պանքի հաճոյքով կը սնանէր, մինչ նոր աղանդաւորներուն բա- րոյականը՝ համախարհային վա- յելումին հաճոյքներովը։ Առա- ջինները հոգեկան բարեպաշտիկ չափազանցութիւններէ տարուած, Սիւսի մը գործեցին, իսկ վերջին- ները պիտի չգագորին Ոճիր գոր- ծելէ։ «Շատ նշանակական է, կըսէ Կիւսթավ Լը Պոն տասն և հինգ տարիներէ ի վեր ընկերավարական կուսակցութեան յառաջապահնե- րուն ձեռքով Եւրոպայի մէջ գոր- ծուած ոճիրներուն ցուցակը։ Կա- ռավարութեան հինգ պետեր, ո- րոնցմէ մին թագուհի, սպաննու- ած, և երկուք ալ վիրաւորուած, երկոտասանակ մը ոստիկանա- պետներ, սպաննուած և շատեր մահացուած են պալատներու, թատրոններու, տուններու, և եր- կաթուղիներու պայթուցումի հե- տեանքով։ Միայն Պարսէլոնայի Լիչէօ թատրոնին պայթուցումին հետեանքով 83 զոհեր տրուեցան։ Փեղերսպուրկի ձմեռնային պա- լտտան պայթուցումին հետեան- քով 8 հոգի մեռան և 45 վերա- ւորուեցան։ Բայց կարծեմ մեր ընթերցողները պէտք չունին Եւ- րոպական հոյակապ հեղինակնե- րու վկայութեանը, կտրենալ գա- ղ-փ սր մը կազմելու համար այն ոճիրներու մասին, որոնց գոր- ծադութիւնը անհրաժեշտ պէտք մը նկատուած է մեր հայ ընկեր- վարականներու և անիշխանական- ներու կողմէն, իբրեւ անընդմիջ- ական սկզբունք իրենց անձ- ները և հաճոյապաշտ վարդա- պետութիւններուն, ժամհարձան- նելու։ Պալեօգեաններու, Միօնե- րու, Վարդօններու, Թաւանճեան- ներու, և Արփիարեաններու արիւ- նոտ զերեզմանները շատ բան կը պատմեն մեզի ոճիրի բնազդովը անդաւորած արդիականներու մասին։

Աւելորդ չըլլար անշուշտ, եթէ ու շարքութեան առնունք այն տարրերը, որոնցմով կազմուած է յեղափոխական կամ անիշխա- նական ընկերավարութիւնը աշ- խարհի զանազան կողմերու վրայ։ Բացի հազուադէպ բացառութիւն- ներէ որոնք ընկերավարութեան կողմը միտած են ընտրական պայ- քարներու մէջ պաշտօնախընդ- րական յաշոյղութիւն ձեռք բերե- լու համար, միմիայն ժողովրդ-

դային դասակարգերու օժանդա- կութեամբ, պիտի չգտնենք մէկը, որ ինքն իր պարկեշտութեամբն ու գործունէութեամբ տունի ու դիրքի տիրացած ըլլալ, նոյն իսկ գործաւորական դասակարգէն ա- նոնք, որոնք նուազ չուայ և ա- լելի խնայող, կը յաշոյղին պղտիկ գործի մը, կտոր մը հողի կամ խուղի մը տիրանալ, տեսնուած է որ անոնք այդ ստացումէն յե- տոյ շատ աւելի պահպանողական- ներ եղած են քան որչափ չեն եղած մեծ կալուածատէրեր։ Այդ- կարգի ընկերավարականներուն փա- ղանգը գրեթէ իր ամբողջու- թեան մէջ, պորտաբոյծներու, կէս- գիտուններու, իմաստակներու ձախողածներու, հոգիով ու նկա- րագրով սնանկացածներու խմ- բաւորում մըն է միայն որը ան- կարող զգալով ինքզինքը ու է է կամքի ոյժի, նետուած է բազ- դախնդրութեան այդ նոր տեսա- կին մէջ, ժողովրդական իրա- ւունքներու իրենց ինքնակոչ պաշտպանի դերին մէջ ըստ ամե- նային ինքզինքնին նպաստաւո- րուած գտնելով իրաւախնդիր ժողովուրդի մը կողմէն, «Խառա- ղուրկներ» չհասկցուածներ, ան- գործ փաստաբաններ չկարգացու- ած գրագէտներ, առանց յաճա- խորդի մնացած բոյններու դե- ղագործներ, լաւ չլճարուած վար- ժապետներ, անպաշտօն մնացած վկայագրուածներ, պաշտօնեայինը սրունք իրենց ապիկարութեան պատճառաւ կ'արհամարհուն ի- րենց «փաթրոններէն և ինչ բնա- կան տրամադրելիներն են ըն- կերավարութեան։ Անոնք, իրապէս, շատ քիչ կը հետաքրքրուին վար- դապետութիւններով։ Անոնք կե- րպէս բռնի միջոցներով ստեղ- ծել ընկերութիւն մը, որուն ի- րենք պետեր ըլլան իրենց հա- ւասարասէր պնդումները ոչ մէկ կերպով զիրենք կարգիլեն զօրա- ւոր արհամարհանք մը ունենա- լու հանդէպ խուժանին, որ իրենց նման գիրքերէ չէ՝ ուսած, Անոնք ինքզինքնին շատ բարձր կը նկա- տեն գործաւորէն ուրկէ ստու- գիւ շատ աւելի ստորին են իրենք գործնական մտքի թերութեամբ, և իրենց եսասիրութեան չա- փազանցութեամբը, Եթէ անոնք տէր դառնային, իրենց իշխանա- կանութիւնը Մարտիի Սէն Ժիւս- թի կամ Ռոպէսբիէի՝ այս գե- րազանցօրէն անհասկընալի կի- սադիտուններու տիպերուն իշխա- խանականութենէն նուազ պիտի չըլլար։

Արշալոյսին կարմիրը մեզի կը պատմէ թէ որպիսի առաւօտ մը ծնի իրմէ։ Պէտք չկայ բնաւ օր- ուան սպասել, զանի գնահատելու համար իր ամբողջական վերելե- ումին մէջ։ Մի և նոյնն է նաեւ ընկերական խնդիրներու փուլե- լուն համար։ Սկզբնաւորութիւն

մը ճշմարտախօս պատմիչն է գործի մը վախճանին։ Հայերուս մէջ գործելու ինքնահրաւէր կոչումն ունեցողներու կեանքին ու գոր- ծելակերպին պղտի մէկ վերու- ծումը, արդէն իսկ բաւական պի- տի ըլլալ զմեզ լուսաբանելու ա- պագայի ծայրագոյն բռնապե- տութեանը մասին, որ պիտի գե- րազանցէ Համիտիւնն ու Պիկմա- լիոնինը և որուն կ'առաջնորդուի այսօր մեր անգիտակից ու կան- խատեսութենէ զուրկ ժողովուրդը։ Միջադգային Յեղափոխական ըն- կերավարութեան չէֆները երջան- կօրէն փոխատնկուած մեր մըթ- նոլորտին տակ, բռնաւորներ են պարզապէս իրենց ետին թողած անանուն տնցեալ մը որ մութ ու մույլ է իրենց ծագումին նման, և պղտոր ու դիպուածական ի- րենց նկարագրին պէս, անոնք պահուցած կարգ մը զոյղունի անուններու տակ, իբրեւ կոմս կամ Ասպետ, Իշխան կամ փաշա՝ կը հրամայեն, իրենց նորընծանե- րուն, որոնց ընդունելութեան պայման կը դնեն բացարձակ հը- նազանդութիւնը։ . . . մինչև ոճիր, և բացարձակ կրաւորականու- թիւնը մինչև մեքենական անանձ- նաւորութիւն։ Այսօրինակ ինք- նամատուցումներով ու կերպըն- կալ կրաւորականութիւնով ձեւ- կերտուած հոգիներէն ամեն բան կարելի է սպասել, քանի որ զի- րենք շարժման մէջ դնող թելա- գրութիւնը բռնաւորներէ, իշ- խան կողպատելու հիւանդու- թեամբ վարակուած, մէկ խօսքով վատասեռած հոգիներէ կը բըզ- խի։

Մուշեղ Եպիսկոպոս

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆ

Թոնթանցա 18 մարտ 1910

Անկեղծ դիտողութիւն մը

Տարին մ'իվեր քաղաքիս եկե- ղեցւոյի և վարժարանին այնքան ծանր բեռը իւր ուսին վրայ առած անձնութեամբ աշխատող Պատ. Թաղականութիւնը թէ, ե- կեղեցւոյ փայլ մը տուաւ և թէ վարժարանին յառաջգիմութեանը ինչպէս նաեւ վերջերս, իւր տա- րեկան պարահանդէսը տուաւ։ «Արաքս» սրահին մէջ, լաւական փայլուն և գոհացուցիչ բոլոր ներկաները, ո՛ր կային նաեւ օ- տար ազգերէ վաճառական և լաւ դիրքի տէր անձեր տոննային գոյունականութեամբ մեկնեցան, լաւ տպաւորութեան տակ ինչպէս կ'իմանանք՝ բաւական կլորիկ գու- մար մը, մօտաւորապէս 3000 ֆր. ալ զուտ շահ մը մնացած է Թաղ. Սնտուկին։ Իրաքանչիւր ազգա- սէր և պարտածանաչ հայանհատ ուրախութիւն զգացած է այս առթիւ։

Սակայն ցաւ ի սիրտ վերջերս

կ'իմանանք թէ Թաղի խորհրդոյ անդամներէն գրեթէ ամենէն աւելի ջանասէրը աշխատողը և մեկն ունի ժամանակ նոյն իսկ նիւթապէս շատ անգամներ վարժարանին սատարողը Տ. Կարապետ Մխիթարեան, հրաժարած է պաշտօնէն ինչ անծանօթ ինչ ինչ պատճառներով և այժմ 3 հոգիի վրայ կը մնայ այդ լուծը, Մենք պիտի խնդրէինք վերոյիշեալ պարոնէն թէ, առանց «ըսի ըսաւ»ներու կարեւորութիւն տալու կրկին շարունակէ իր նուիրական պաշտօնը նուիրական կրնեմ որովհետև Ռուսիոյ հայութիւնը առանց այդ օրինակ աշխատողներու կորուստ է արդէն:

Այժմ բաւական զարգացած և լաւ ձեռքերով օժտեալ, քահանայ մ'ունենք, ուրեմն ջանանք օգտուիլ իրմէն:

Դիտող մը

ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸՆ ԱԼ

«ԱՐՄԷՆԻԱ»ԹԻՆ

Որչափ սր ալ ալեւս ցնդածի մը տպաւորութիւնը ընդհանրացած ըլլայ «Արմէնիա»ի խմբագրին նկատմամբ, որչափ որ ալ ըստ Սուրբ Պարթեւեանի «Թերթիկին հաց տուէ՛ք»ի բացատրութեամբ որակուած ըլլայ այդ թերթին այս օրուան գոյութիւնը, մենք պիտի չեղանք երկու խոսքով անգամ մըն ալ պատասխանել Մ. Փորթուգալեանի վերջին «համառօտ պատասխանին» (?), այնչափ համառօտ որ իր թերթին ամբողջ երկու եւեմները գրաւած է, ինչ որ կապացուցանէ որ մարդը անբուժելի լիօթէն ցնդած է:

Ընթերցողները գիտեն թէ «Արմէնիա»ն մեզի հետ վեճի բռնուած է մեր այն յօդուածին առթիւ, որով ցոյց տուած էինք Դուբեան Պատրիարքի բողոք-հրաժարականին շատ նպատակայարմար լինիլը եւ զայն քննադատողներուն հակառական դիրքը: Բայց որովհետեւ Դաշնակցական կուսակցականները նախ Պատրիարքը հրաժարելու թելադրելէ յետոյ՝ թուրք գոյիթէին հետ դաշինք կնքելով, այդ հրաժարականին դէմ խօսել սկսած էին «Արմէնիա»ն ալ անոնց եւթակուած, ինքնին թոյլ տուած էր Պատրիարքին հրաժարականը «լքուած պաշտօնի դժուարութենէ ընկրկում» անւանելու հետեւապէս թէ իրեն կը գպչէր մեր յօդուածը եւ թէ իր դաշնակցական տէրերուն, ուստի փրփրալից բերով սկսած իր երկարատեւ յօդուածները «Իրաւունք»ի դէմ:

Մենք մեր փետր, 9 թիւին մէջ խիստ համառօտ պատասխան մը տուով Տ. Փորթուգալեանի, աւելցուած էինք որ մեր այդ կարճ պատասխանն ալ հրաժարակէ իր թերթին մէջ եւ դատաստանը իր ընթերցողներուն յանձնէ բայց նա փոխանակ այդ անվերջ ան կեղծութիւնը ցոյց տալու, եւեր է այս անգամ «Արմէնիա»ի ութը սխալակները լեցնել միմիայն մեզ մրտադու խեղաթուրութեամբ: Ուստի քչի մը ըզբաղինք իրմով:

Ըստ «Արմէնիա»ի, «Իրաւունք» չըն չափաններու կիսապաշտօնական օր

կանն է եղեր. մենք արդարացուցեր ենք Ունեանի եւ օւրիչ հայ հարուստներու սպաննութիւնը: Այս հրէշային սուտերը բնականաբար կ'ըլլայ չպիտի գտնուի, քանի որ «Իրաւունք»ի անկախ գիրքը սկիզբէն մինչեւ այսօր ոչ ոքի համար գաղտնիք մը չէ: Տ. Փորթուգալեանի կարծառեւ ըլլալը գիտէինք բայց քեօր ըլլալը չէինք գիտեր:

Այնպիսի կը վկայէ թէ Ունեանի ըստ պանման հետեւեալ օրը առաջին բողոքը «Իրաւունք»ն էր որ արձակեց իր հրէշ չիւրն մէջ ըսելով թէ «չի կրնար երեւակայել հայ մը որ այդ ոճիւր թելադրած ըլլայ Ունեանի նման հայ բարերարի մը դէմ. յետոյ «Իրաւունք»ն էր որ չնչ. վերակազմակերպութեւն օւղաններուն մէջ երեւցած Ունեանը անուանարկող փողոցային գրութեանց դէմ խօսելու բողոքեց եւ այդ առթիւ կասկածելի գտնելով վերակազմակերպութեան բացատրութիւն պահանջեց անոնցմէ ինչ որ մինչեւ այն ատենը չէր համարձարած ընել ոչ մէկ արտասահմանեան թերթի: Փորթուգալեանը քեօր էր, խոսել էր որ չէ տեսեր ու լսեր ալ անկէ յետոյ շարունակուող մեր բողոքները թէ՛ խմբագրական յօդուածներով եւ թէ Արզում ստորագրութեամբ ուրոք արձագանք գտան շատ մը թերթերու մէջ եւս:

Կալծեմ ալ կարգը եկաւ այդ մարդուն երեսին, պարտու հացախնդիր կեղծաւոր, դուռն որ պապանձեցար լուռ մնացիր երբ «Մշակ»ի «Նոր-Դար»ի և «Իրաւունք»ի խմբագիրները դաշնակցական տղաքներէ տէնտուր ենթարկուեցան, բայց փութացիր հարուածելու Մինաս Զէրազի պէս ազգանուէր գործիչ մը, արդարացեալ համար քու դաշնակցական տէրերդ, որոնք զանի մեծամարտի կը հրաւրէին որպէս զի սպանն անոր շատ արգար մէկ քննադատականը պատրուակ բռնելով: (*)

Երբեք մարդամօքն չի, դուռն որ տակաւին դաշնակցականներու ծուղակին մէջ չմտած, հայ ազգին մէջ ընկերվարութեան բոքականտին անպէտ եւ վնասակար ըլլալը կը փաստաբանէր քննչու լուռ ու մանչ կը մնաս քանի մը ասորիներէ ի վեր յորմէ հետեւ դաշնակցութիւնը էն կարմիր ընկերվարական կազմակերպութեան մը վերածուեցաւ եւ որուն հետեւեալ զով կասաւ: Դայն ալ արեւմտեացաւ ու դէռ կար իւնտուր: Ասոնք ալ անկարեւոր դեպքեր էին որ ձեր խօսիլը, կարծիք յայտնելը չարթօց:

Ո՛վ դու, ոճրագործութեանց լուռ վկայ Փորթուգալեան, չը լսեցի՞ր քու նոր տէրերդ զՎառայ մէջ գործած անբարոյականութիւնները, սրբապղծութիւնները, Աղթամարի կողպուելը, «ազատ մեր»ի քարոզչութիւնները «Արտասրբապան»ներուն ըստինքը եւ սկիզբէն, ոչ քանդու մնեալ: Այս ամէսի դէս օրը ալ զայդ հայ ազգը իր մասնակցով, իր ժողովականներով իր գրագէտներով եւ իր ազնաւոր գովորչներով միաբերան բողոք բարձաւ ու կանոնադատականաց, գուն զէր, բնու պապանձեցար, ինչու զուսեղակարմիր ծրագրէ չի յոնեցիր եւ վառէն չի նմու թղթակցութիւններ կը հրատարակես, ցոյց տալ ջանալով թէ Վառայ մէջ ամէն բան լաւ կը ընթանայ, վասնզի քու նոր տէրերդ այդպէս, հայ է. կեղծաւոր փորձեցի, որ մօղու կը զբաւս եւ ուղտը կը կ'ընես:

Այս հարցումներուն, այս «ինչու»

(*) Ընթերցողները կը յիշեն անշուշտ Բարիզի դաշնակցական պետ Լօրիս Մէլիքովի մենամարտը հրաւրելու զԶէրազի:

ներուն շարքը շատ չերկարելու համար, բաւ կը համարենք առ այժմ այնչափ, ցոյց տալու համար թէ ինչ գահավէժ անկուսմը կրած է «Արմէնիա»ն:

Յ. Գ. Սա եւս զեկուցանենք Փորթուգալեանի, թէ չըլլայ որ կրկին 15-20 տարիներ առաջ՝ դրած յօդուածները յիշելով, ինքզինք այսօր ալ անկողմակալ եւ ուղղամիտ ցոյց տալու զպապանութիւնը ընէ: Ինք թող ցոյց տայ մեզ սա վերջին 4-5 տարուան միջոցին՝ յորմէ հետ դաշնակցութեան ծուղակը ինկած է՝ գրած քննադատականները, զաշնակցականներու դէմ որոնց այդ չըլլանք մէջ գործած լիւրաւոր սխալները, ոճիւրները եւ զաւերը ամէն հայ թերթի քննադատած են: Բացի իրենց օւղաններէն եւ «Արմէնիա»էն:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Կիրակի օր տեղի ունեցաւ Թաղի խորհրդոյ ընտրութիւնը, ինչպէս ըսած էինք մեր նախորդ թիւով, ընտրական պայքար մըն էր որ կը մղուէր այդ օրը, բայց խաղաղ, խելօք պայքար մը. վասն զի պայքարող կողմերը յեղափոխկուսակցական հողի վրայ չէին կանգնած, ինչպէս կրօնն ուսուսհայք: Սա մ. Սահմանադրութեան վերհռչակման շնորհիւ միամիտ ներք խեղճութիւններու և կուրներու մղող հացախնդիրներէ բաւական մաքրուած է Պուրկարիան ինչպէս նաեւ արտասահմանեան շատ մը գաղութներ: Անոնք այլեւս իրենց ասպարէզ ընտրած են Պուրկար և զաւառը: Բարի վայելում: Ուշուգրաւ կէտը սա է որ թիւրքերի մէջ շատ շուտով իրենց գոյնը դուրս տուին և հայ ժողովրդեան ստուար մեծամասնութեան հասկցուցին իրենց արժէքը: Անոնք արտասահմանի մէջ տասնեակ տարիներ զատ զատ կուռելով և զիրար բռնկելով իրենց գոյութիւնը կը ցնին պահել, բայց Պուրկար մէջ հանրային կարծիքին ընդ փոյթ զարթունումն առջիկ իրենց կուսակցական գոյութեան վտանգ տեսնելով, հարկադրուեցան շուտով կուռել կուռելի տալ և միացեալ ուժով կուռել ազգին կամքին դէմ. դեռ ժամանակ մը մենք պիտի դիտենք հեռուէն այդ կուռելը:

Յարդ վառնայի մէջ չէր եղած թաղականութեան ընտրութիւն մը որ այս անգամուան չափ քուէարկու ունենար. 600 է աւելի քուէ ձգուած էր տուիին մէջ. և այդ քուէներու գրեթէ երկու երրորդի առաւելութեամբ ընտրուեցան հետեւեալ տեարք:

Աբրահամ Կարապետեան
Կարապետ Աճէմեան
Յարութիւն Սարուխանեան
Գրիգոր Ծովհաննէսեան
Աբէլ Աբէլեան
Յակոբ Կարապետեան
Գրիգոր Թոսպըլըզեան

Բաղձալի է որ այս պարոնները ինչպէս որ ընտրուելու համար կարելին ըրին և յաջողեցան, նոյնպէս այդ պայտօնը արժանաւորապէս և խղճի մտքով արելու համար իրենց կարելին ի գործ դնեն: Թաղական ընտրութիւն թէ և փառասօթիւն, ու համար հաճոյք մըն է, բայց ընտրուելէ վերջ անգործ ու անտարբեր նշատիլ կամ սխալ ու ազգավնաս քայլեր առնելու ծանր նախատինք մըն է լիկ, ընտրողին և թէ ընտրուողին համար մանաւանդ այդ վերջինին համար:

Այժմ նոր թաղականութիւնը իր առջիկ ունի Ազգ. երկսեռ վարժարան մը որ զուտ և բարեկարգութիւն կը պահանջէ: Նախորդ թաղականները եթէ վարժարանի պաշտօնեաներէն զգոհ էին ասոնք ալ իրենց զգոհու: Թիւնը ունին եղեր, այնքէ գրասեղաններու հին ու անբաւական ըլլալը: Այս պատճառաւ ուսուցչի մը առջիկ օր կ'ըսէր թէ յանցանքը ժողովուրդինն է և այդ ժողովուրդը այս տարի արդիւնք սպասելու իրաւունք չունի: Մենք պատասխանեցինք թէ յանցանքը վարժարաններունն է, որոնք պարտէին բուռն կծրպով պահանջել գրասեղաններու նորոգութիւնը, ինչպէս կը պահանջեն իրենց ամսականներուն օրը օրին վճարումը, մերթ գործադու ընելու պատճառով:

Ինչպէս վարժարանին նոյնպէս ալ եկեղեցւոյ մասին բարեկարգութիւններու պէտք կայ: Նոր թաղականները կարող պիտի ըլլան հաստատամտութեամբ և ուղղադատ անկողմակալութեամբ այդ բարեկարգութիւնները ի կատար ածելու: Մենք այս մասին քիչ մը թերահաւատ ենք, սկեպտիկ ենք թէ և, բայց կրնանք համբերել ժամանակ մը արդիւնքէն դատելու համար գործը և գործէն դատելու համար գործիչը:

Տ Ա Պ Ա Ն Ա Ք Ի Ր Ե Ր

1896 տարուայ փետրուարի 29ին, Վառնայի Եզգ. վարժարանի հրգեհին մէջ հայ ծարակ եղող Պուրկարայից ողբացեալ հովիւ Տէր Մկրտիչ վարդապետ Տէրուեանի գերեզմանին վրայ տապանաքար մը դնելու գովելի փափսք վ փոքրիկ հանգանալութեան մը կը ձուարկեն Պ. Պ. Հանր. Յարութիւն Սարուխան եւ Սարգիս Կիրակոսեան:

Բաղձալի է որ հոգեւոր նահապետի յիշատակը յարգող Վառնայի եւ Տոպրիչի ազգային մասնակցին այդ հանգանակութեան:

Հ Ր Ա Ի Ի Ր

200 ֆոգ. տրամադրութեանը տակ կը գնաս այն անձերուն, որոնք ըսած էին թէ եւ Ազգ. թաղականութեան ընտրութեան առթիւ ուրիշներու պէս քուէթուղթ բաժնած եւ ակիւրյիցա ըրած եմ եղիր: Կը հրաւրեմ զիրենք սխալ մէկ շարաթ թող ապացուցանեն ու հաստատեն թէ ես սա կամ ես կողմն քուէ թուղթ բաժնած եւ ցրուած եմ ժողովրդին նայան կողմ: Այն ատեն անմիջապէս 200 ֆոգ. զգին որքերուն կամ ուրիշ բարեգործական հաստատութեան մը ինչպատալ իսկ թէ չկրնան այն ատեն իրաւունք ունիլ իրենց ըսելու զըր պարտիչներ եւ քուսներ:

Կարմիր Պեկիլիան

Վառնա, 24 մարտ 1910

—Այսօրու կաթոգ. փ. խանորդ Տ. Վաղարշակ Վրդ. Ին Այսօրու վերա- գառնալու արտոնութիւն տրուած է:

—Պատերդ. Ատեալը անպայման դա- դարձան դատաւարտա՝ է Արեւելի օրա- թերթը:

—Չարաւնճագի առաջ, Տեղապահը Բար ընդ գացած է իր թեմին հայ գիւղա- ցիներուն գրաւուած հողերը ետ ստա- նալու գործը հետապնդելու համար: Այդ հողերը գրաւողները պէյեր ըլլալով, ասոնք գրգռուե- են վարդապետին դէմ ասոր հետապնդումներուն պատճառաւ: այնպէս որ վարդապետը այժմ կը վախ- նայ եղբի իր թեմը վերադառնալու ինչ ապահով երկիր:

—Կովկասի հայ թաղերուն եւ գիւ- ղերուն մէջ խռովարկութիւնները կը շարունակուին. գտնուած դէնքերը կը գրաւուին. շատ մըն ալ ձերբակալու- թիւններ կ'ըլլան, բայց դաշնակցական «կոմիտէ»ի անդամ ձերբակալները ազատ կ'ընեն:

—Ինչո՞ւն ապահովագրական ընկե- րութեան դէմ բացուած դատը ի նը- պաս տ'հայ հրկիզեալներուն վնաս է Պոլսոյ վաճառականական չի. դատա- րանը: Այդ վնասը կ'ընեն թիւներ պար- տաւորանալ է վնասը իր ապահովա- գրած եւ այրուած շէնքերուն արժէքը: Նայել պիտի պարտաւորուին ընել մի- ւս ապահովագր. ընկերութիւններնալ:

ՀԱՎԱՏՐՍԱԹ

ԹԻՒՐԻՔԻԱ

Չար Ֆէրտինանտա օլտըղը կի- պի սըրպ գըրալընա տախի բէք թանթանալը սուլէթտէ հիւանի գապուլ օլմուշ տըր: Սուլթան սիր- քէնիէ գատար կիտէրէք, գրալ Իէթարը գարշըլմըլ վէ Մէրա- սիմ՝ քէօշկիւնէ կէօթէւրմըլ տըր: Բուվար տախի պու տէֆա Սըրպ գըրալընա պէօյիւկ նիւմայիշէր Իթտիլէր, պանտէրալարէ խա- նէլէրինի վէ մաղաղալարընը տո- նաթտըլար: Չար Ֆէրտինանտա Իսէ գըսկանճըղալարընտան մէյուս պիր հալտէ պուլունմուշլար ըսը: Բուվ Բաթրիդի տախի սըրպ գը- րալընը գարշըլմալա հաղըրլան- մըլ իքէն: հիւքիւմէթտէն միւ- սաստէ Իտիլմէտի, ֆազաթ Ֆը- րալ Իէթար օրթոտօքսըլը միւ- նասիպէթի իլէ բաթրիդ շանէյէ տախի պիր վիդիթա վէրմէք քէն- տիսինէ պօրճ ատտ Իտէրէք, պու միւնասիպէթի Բուվար Ֆէնէրտէ մուլթանթան թարղտա անը գա- պուլ Իթտիլէր:

—Տէվրի Իթթիպատատա եիքսիկ միսնէթէրտէ պուլունմուշլարտան սիւրկիւն Իտիլմէշ օլտըլարա Սուլ- թանըն ճիւլուսի կիւնիւնտէ անփ իլան օլուննաղը սէօյլէնիլի- յօ:

—Սամսոն-Սիվաս-Էնկիւրի վէ Տրապիզոն-Է զըրում շլմէնտը- ֆէր խաթլար իչիւն Իէվթի- շաթ մէյուրլարը պու կիւն Սթան- պօլտան հարէթի իտէյօր լար:

—Նւֆաա վէ թիճարէթ նաղը- քը Հալաճեան էֆենին. Իսթիֆա

Իթտիլէնէկի վէ եախօտ եալը- նըղ Թիճարէթ նաղըր գալուպ- տէ, նաֆաա նէղարէթինէ Սէլա- նիկ մէյուրը Բահմի պէյին թա- յին օլուննաղը շալի օլմուշ տըր:

—Մահուտ Մէհմէտ Ալի Է. կի- շէնիւրաէ պէլէտիյէ րէյիսի ին- թիխապ օլմաք իչիւն Թիւրք մէք- թէպլէրին թալէպէլէրի վէ պիր թաղըլ Իսթիպատա թարաֆտար- լարը պաշընա պիրիքտիրուպ, հիւքիւմէթէ վէ Էրմէնիլէրէ գարշը նիւմայիշ Իթտիլմըլ վէ «Բէօր օլտուն Էրմէնիլէր» պա- ղըլթմըլ տըր: Նէղարէթտէն Մէհ- մէտ Ալիին թահլըլ մուհաքէ- մէյէ ալընմաը Էմր օլունմուշ տըր:

—Սթանպօլուն սօգաք քէօթէկ- լէրինի շէնիւրտէն ալըլարը խալի պիր մահէլէ կէօթիւրուպ, օրա- տա պէսլէմէք իչիւն պէլէտիյէ 6000 լիւրա թախտիս Իթմըլ տիր, Էրքէկ քէօթէկլէրի ալըլ վէ տի- շիլէրի ալըլ մահէլէրէ գօյաճադ- լար ըմըլ:

—Ղալըլ միւսիմ ասքէրլէր իչիւն օրտուլարա եօլլանան եէնի էմիրնամէլէր խրիսթիանալարըն բէհրիկ կիւնիլէրինէ վէ բաղար- լարա վէ քիլիսէյէ կիթմէլէրինէ խուսուս մէղունիլէթլէր վէր- մէտիքտէն մաստա, տին տէր- լէրինէ վէ հօճալարըն վաղլարը- նա միւսիլմանլար իլէ պէրապէր հաղըր պուլունմալարընը Էմր Ի- տէյօր վէ միւսթէնտ օլարաք Եալընըլ սէնէտէ Յ կիւն Չաթիկ), Ծնունդ վէ կաղանդ) անլարա սէր- պէստիլթ վէրիյօր:

Պու կիւնէ գատար պօրճ լարընը Էօտէմէմիշ օլտն ապօնէ- լէրիմիդին Չաթիկէ գատար Է- տէմէլէրինի րէճա իտէրիլ:

Ր Ս Ե Ա Ն Է Լ Ա Մ Է Թ Ի

Արնաւուտըլգտա աշվալաղըր- լաշմադտա տըր: Կէշէն կիւն Ի- րէքտէ պիր արնաւուտ՝ միւթէ- սարլիք Եարէլէտի վէ ասքէրիէ գօմանտանըն Էօլտիւրտիւ: Պու վաղաա ատի պիր զուհուրէթ վէ շախի պիր խուսումէթ Էսէրի օլմալուպ, Թիւրք հիւքիւմէթինէ գարշը Արնաւուտլարըն ըսեանա հաղըրլանըղլարընա պիր տէլի տիր: Սթանպօլտա մէճիսի վիւ- քէլա պու խուսուտա գանաթ հասըլ Իթմիշ կէօթիւնիյօր: զիրա Արնաւուտըլը Իտարէի Էօրֆիյէ ալթընա ալմաք իչիւն Էմիրլէր վէրիլտի Գօսօվա վալիսի Մաղհար պէյ միւլէքէրէ իչիւն Սթանպօլա կիլիմիշ սիւպ, Եէնի թալին օլու- նաճաք ասքէրիէ գօմանտանը իլէ մահէլի մէմուրիյէթինէ չի- թապան օլիյօր: Հէր թարաֆտան Արնաւուտըլա ասքէր Եօլլանըլ- մադտա օլտըլը կիպի՝ Սթանպօլ- տան տախի պիր գաշ թապուր կէօնտէրիլէնէք տիր: Էրմէնիլէրին ուֆաք պիր շիւ

քիւլէթինէ ըսեան վէ Իսթիլալ րէնկի վէրուպտէ պիւնէրճէ ֆու- գարա գըրտըրան թիւրք հիւքիւ- մէթի՝ շու Արապլարըն վէ շու Արնաւուտլարըն սիւհապէտէթ ըսեանլարընտա Էհալիտէն պիր ֆէրտին պուրնունը գանաթմա- տըլը միւլհաղէյէ շալան տըր: Ատանտա Էրմէնիլէրին հուրրի- յէթ իլանընտան տօլալը սէվիհն կէօթէրմէլէրի ըսեան Էլամէթի ատտ օլունարաք ասքէրէ վէ Իս- լամլարա 25000 Էրմէնի գըրտըր- տըլար վէ պիթիւն մահէլէր վէ քէօյլէր Եաղտըլար վէ ասըլճա- նիլէրի վէ գաթիլէրի յէ ճէ- ղասըլ պըրադտըլար:

Աճէպա Թիւրքլէր նէ՝ վաղըթ ֆարգ Իտէնէքլէր քի՝ տէվլէթի Օսմանիյէ սատըգէլէ անըն թէ- րադգըլընա խատիմ պիր միլլէթ վար իսէ օ՝ տէ Էրմէնի միլլէթի տիր, վէ Օսմալըլըլ իչիւն նէ՝ միւսիլման Արապլարտան ֆալի- տէ վար, նէ Արնաւուտլարտան վէ նէտէ Բիւրտլէրտէն:

ՏԱԽԻԼԻԹԷ

—Բուսճաք վաղաասընտա ճէրհ օլունանլարտան պիր գաշ քիչի տալի շիֆսեապ օլունմալուպ, վէ ֆաթ Իթտիլէրինի Սօֆիա կա- ղէթալարը Եաղիյօր:

—Եմապօլտան Պապու-Էսկիէ գա- տար պիր շըմէնտըֆէր խաթթը Եաղարաք Թիւրքիւ շըմէնտըֆէրի իլէ պիրլէշտիւրմէք թառաւլվուր օլունիյօր:

—Սըրպ գըրալընա Սթանպօլ- տա օլտն ֆէվզէլատէ հիւանի գա- պուլտան տօլալը Սօֆիա կաղէթա- լարընտան պաղըլարը գըսկանճ- լըլ կէօթէրմէքտէ օլուպ տէյօր- լարքի պուլունտան սոնրա Սըրպ Է- նասըրընա Մաքէթոնիատա տահա միւսատէլի պիր զէմին հաղըրլան- մըլ օլտու:

—Կէշէն կիւն թէքրար Պուլ- կար-Թիւրք սինօրընտա Կըրգըի- լիսէ սանճաղընը Գուլօվա նամ մէվզըտա Պուլկար վէ Թիւրքա- քէրլէրի պէյնիւնտէ Եէնի պիր միւսատէմէ վուգու պուլմուշ տըր: պու տէֆա Ելը աթէշի Պուլկար- լար Իթմիշ օլտըլը Պուլկար կա- ղէթալարը պիլէ ինքեար իտէ- մէյօրլար:

—Չար Ֆէրտինանտըն ապրիլ 20 տէ վիէննալը վէ Բարիսի րէս- մէն զիյարէթ Իթմէք նիլէթիւնտէ օլտըլընը Բէլ Եաղիյօր:

—Շիմտիքի Տէմօկրատ գապի- նէսինին արթըլ կիւնիլէրի սա- յըլտըլընը վէ Մալիսէ գատար տիւշէնէկիւնի Տէն Եաղիյօր:

—Չարըն մալտուտլարը բրէնա, նալէր վէ բրէնսէլէր Թիլիպէտէն Սօֆիայա կիթմիլէր տիր:

—Եէնի սինօր միւսատէմէսին- տէն տօլալը հարպիյէ նաղըրը հիւտուտ գարա գօլլալընա Եէնի- տէն պիր թալիլմաթ Եօլլալուպ սինօրտալ օլտն տէվլէթին քարա-

գօլլարը իլէ տօթանէ վէ մի- լալիմ տալրանմալարընը Էմր Իթտի:

—Կէլէնէկ ապրիլին Իպթիսա- սընտան Թիւրքիա իլէ Պուլկարիա պէյնիւնտէ թիճարէթ ահտնամէ- լէրինին միւլէքէրէսինէ պաշլա- նտրաք, բէք Եաղըն պիր զէման- տա իմզալաննաղը թէէմին օլու- նիյօր:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի
Պ Թ Ի Ա Պ Ա Ր Տ Պ Ի
Բ. Տպագրութիւնը
Երեք հատորներուն գինն է
4. ֆր.
Դիմել Իրաւունքի Խճագրու-
թեան:

ԹԻՒՐԻՔԻԱ			
ՉԱԽԻԼԻԹԷ			
ՊՈԼՆԵՍԻ			
Վալու	100 քիւ.	1930/20.	40
Արապա	15-80 լիպ.		15. 45
ԱՐԻԱ			
Վալու	100 քիւ.	12. 30.	1270
Արապա	45-52 լիպ.		8. 30
ԵՌԻԼԱՅ	100 քիւ.	11. /11.	30
ՉԱՎՏԱՐ	100	13. 30/1420	
ԱՐԱՊԱ			
ՖԱՅՈՒԼԱ	100 քիւ.	24/25.	50
ՏԱՐԷ	100 քիւ.	16/17	
ԲՕԼՕԶ արապա	55-60 լիպ.		60
ՄԻՍԻՐ	100 քիւ.	12	5012. 65
արապա	75 քիւ.		9. 15
ՊԱՆԻԼԻԹԷ			
Վառնա քիւրալընտա պաղապիլէ			
մալլէրին պու կիւնիլէր ֆիլաթը, ալթու			
ֆրանք իլէ:			
ԳԱՀՎԷ		2. 15/2.	30
Շէֆէր նէմէ	չուվալ.		97/98
Շէֆէր քէսմէ	սանտըլ	—51	51 1/2
Բիւրիւն	ձէնօվա չուվալ		47
"	Իսկիլիշ		31. 50
"	Բիգու		53.
"	Ֆիլիպէ		47. 50
ԳԱԶ Պաթուլ Սանտըլ			11.
"	Թալան		10. 20
Ձէթիւն Եաղը քիւ.		1.60—1.70	
ԳՈՒՐՈՒ Իւզիւլ			60. 70
Եսմուրթա			4 80

ԾԱԽՈՒ ԳԻՐԲԵՐ

«Իրաւունք»ի խճագրա- տունէն կարելի է ստանալ
Հետեւեալ գիրքերը:
ՂԱՐԻՊ ԱԽՊԷՐ գին 1. ֆր
ԹԱՍԵ ԵՐԳԱՐԱՆ » 1. »
ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր » 1 50 »
ԹԻԱՊԱՐՏ Բ. » 2.50 »
ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՅ » 1.10 »
ԻՐԱՆԻՆԻՔԻ հաւաքածոյ մէկ տարուանը 12 ֆր.

Издатель: X Курбетянъ
Տպարան «Իրաւունք»ի Վառնա

